

հակիրճ եւ համառօտ բանիւ վիպել ի տառիս զկենցաղավարութիւն սորա (Մովսէս կաթողիկոսի), զի զկնի եկելոցդ առանց բարբառոյ յուշ առնիցէ»։ Յիշատակարանս, որ պահուած է Էջմիածնի Թ. 2372 ձեռագրին վերջը, Թղ. 247ա—258ա, ունիմ ամբողջութեամբ տրամադրութեանս տակ³, ընդօրինակութեամբ Արհիպապատիւ Յովսէփեան Գալեզին արքեպիսկոպոսի, որուն կը յայտնեմ նաեւ այստեղ իմ սրտագին շնորհակալութիւնս այս բարեացակամութեան համար։

Մովսէս կաթողիկոսի դործունէութեան մասին խօսած է նաեւ Գրիգոր Գարանաղցի իւր Ժամանակագրութեան մէջ⁴, թէ իբրեւ աւանատես եւ թէ իբրեւ աւանջալուր։

Մովսէս արեղայ (Բջնեցի), որ «երկուցունց հայրապետացս — այսինքն Մովսէս եւ Փիլիպպոս կաթողիկոսներու — քարտուղար եմ լեալ», կ'ըսէ, 1641ին կը խոստանար գրել Մովսէս կաթողիկոսի ներքին եւ արտաքին կեանքը. «զոր յայլում վսյրի պատմագրեալ արտասանեցից⁵»։ Ինձ ծանօթ չէ, թէ կատարե՞ց անիկա իր խոստումը։

³ Ձեռագրին եւ Յիշատակարանին մասին հմտ. Н. Адонцъ, Діонисій Өракійскій и армянскіе толкователи, Петроградъ, 1915, стр. VIII—XIII. Յիշատակարանի կարեւոր աեղիքները տես յընթացս գործիս։

⁴ Հրտ. Երուսաղէմ 1915, էջ 287—301 եւ այլուր։

⁵ Սմբատ Տէր-Աւետիսեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Ամենափրկիչ վանուց Ն. Զուղայի. Թ. 94 (անտիպ)։